

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՈՂԲԱՑՅԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.



ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

(Խոսված Անթիլիասի Մայր Տաճարում, հոգեւոյս Կաթողիկոսի դագաղի առջեւ)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Սիրելի հայրե՛ր և մայրե՛ր, հարգելի եղբայրնե՛ր և քոյրե՛ր.

Հունիսի 22-ին Անթիլիասից էջմիածին եկած հեռագիրը գուժեց Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի մահը: Այդ օրը կիրակի էր: Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը և Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները, խորը կսկծանքով համակված, հեռագրեցին բոլոր թեմերին՝ ի հիշատակ Հանգուցյալին կատարել սուրբ պատարագ ու հոգեհանգիստ և որոշեցին մի պատվիրակություն ուղարկել Անթիլիաս՝ ներկա լինելու թաղմանը:

Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսի մահը անսպասելի էր. ճիշտ է, որ նա հիվանդ էր երկար ժամանակ, բայց թվում էր թե օրեցօր դիմում էր դեպի բարելավում: Եվ մենք հոգվով աղոթում էինք նրա ապաքինման համար: Անագորույն մահը կոտրեց նրա գրիչը, որ հարաժամ շարժվում էր հոգուտ իր ժողովրդի և իր Եկեղեցու: Մենք այսօր կանգնել ենք մի մեծ եկեղեցականի առաջ և նրա սրբազան անյուսի առջև ծունկի ենք խոնարհվում: Ահա կես ժամ ևս և նրա մարմինը հողին կհանձնվի: Մենք բախտ էինք ունեցել աշակերտ լինելու նրան էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: Նա իր խոսքերով և դասախոսություններով ոգեշնչում, խանդավառում էր մեզ:

Մայր աթոռում նա վարչական բարձր պաշտոններ էր վարում և միաժամանակ խմբագրում «Արարատ» ամսագիրը: Նրա բարոզչական խոսքը՝ մարդկանց դեպի երկինք էր սլացնում: Ո՞վ չի լսել նրան և չի տեսել նրա եռանդ ներշնչող գործունեությունը. նա ոգեշնչում էր իր խոսած նյութով և իր գաղափարները պարզությամբ մատուցելով ունկընդիրներին: Նա զանազան գեղեցիկ համեմունքներով էր բաղցրացնում իր խոսքերը ունկնդիրներին: Նա գիտեր ժողովրդի սիրած թեման և ըստ այնմ խոսում էր:

Բոլոր հայերը սգում են այսօր Գարեգին Կաթողիկոսի մահը, բոլորը վշտակիր են նրա համար: Իր մասին դուք շատ հոդվածներ եք կարդացել և շատ բան լսել, ուստի և կանգ չենք առնում նրա բովանդակալից կենսագրության վրա:

Գեորգ Զ. Վեհափառի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և անձամբ մեր՝ պատգամավորության անունից հայտնում ենք մեր խորը ցավակցությունը: Հանգուցյալի մահը մտավորականության վրա խոր տպավորություն է թողել. այդ առթիվ ստացել ենք ցավակցական բազմաթիվ նամակներ և հեռագրեր:

Խոշոր անձնավորություն էր Գարեգին Կաթողիկոս և որպես գիտնական. նրա մտավոր

հայացքը ընդարձակ էր, բազմակողմանի և խորաթափանց: Նա իր նյութերի մոտեցումով կարող էր հմայել և՛ ընթերցողներին և՛ ունկնդիրներին:

Վեր կա՛ց, Վեհափառ Տե՛ր, Քո շուրջ ժողովված ենք մենք. մոտավոր և հեռավոր տեղերից բոլորս եկել ենք երկրպագելու Ձեզ: Այս հասարակությունը եկել է ողբալու Քո մահը: Անա՛ այն Սուրբ Սեղանը, որի վրա Դու պատարագեցիր: Անա՛ այն եկեղեցու պատերը, որը կամենում էիր որմնանկարել: Քո խաղաղասիրական քարոզները մենք չենք կարող մոռանալ: Միասնականության մասին Քո պատգամները ոգևորել են մեզ և մոտ են մեր սրտին: Քո թարմ անյուղի առջև բոլոր բոլորը երդվեն հետևելու Քո խորհուրդներին:

Գարեգին երանաշնորհ Կաթողիկոսն, իր իմաստությամբ, սերտ կապ էր ստեղծել էջմիածնի և Անթիլիասի Աթոռների միջև: Երբ Գեորգ Վեհափառը իմացավ նրա մահը, խորապես վշտացավ ու ցնցվեց:

Մի մեծ կորուստ է Գարեգին Կաթողիկոսի մահը: Այդ կորուստը սակայն կարող ենք դարմանել՝ հետևորդ լինելով նրա խորհուրդներին և ցանկություններին:

Արդ, երանաշնորհ Հա՛յր, մենք, Ձեր խոնարհ աշակերտը, էջմիածնի կողմից, հարգանքներ ենք մատուցում Ձեզ: Ձեր խոնարհ աշակերտը հարգանքներ է մատուցում Ձեզ, էջմիածնի նվիրված հոգևորականիդ:

Սիրելի ժողովո՛ւրդ, թույլ տվեք այս կարճ դամբանականով փակեմ իմ խոսքը:

Աղոթե՛նք, որ Տերը նրա հոգին հավերժական հանգստի արժանացնի:

Աղոթե՛նք աշխարհի Փրկչին, որ մեզ տա արժանավոր հաջորդ, այնպիսի հաջորդ, որ Աթոռը բարձր պահե, լինի Հանգուցյալի խոսքերի և խորհուրդների հետևորդը:

Կրկին աղոթենք Նորին Սրբության հոգվո հանգստության համար, ամեն: